

Սույն փաստաթուղթը միայն փաստաթղթային գործիք է, եւ հաստատությունները դրա բովանդակության համար որեւէ պատասխանատվություն չեն կրում

►B

Համայնքում բուսատեսակների նկատմամբ իրավունքների մասին» Խորհրդի թիվ 2100/94 կանոնակարգի (ԵՀ) 14(3) հոդվածով նախատեսված բացառության մասին կանոնները կիրարկող՝

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 1995 թվականի հուլիսի 24-ի

թիվ 1768/95 ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (ԵՀ)

(ՊՏ L 173, 25.07.1995թ., էջ.14)

Փոփոխված՝

Պաշտոնական տեղեկագիր

Թիվ էջ ամսաթիվ

►M1 Հանձնաժողովի 1998 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 2605/98 կանոնակարգով (ԵՀ) L 328 6 4.12 1998

▼B

Համայնքում բուսատեսակների նկատմամբ իրավունքների մասին» Խորհրդի թիվ 2100/94 կանոնակարգի (ԵՀ) 14(3) հոդվածով նախատեսված՝ բացառության մասին կանոնները կիրարկող՝ « ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 1995 թվականի հուլիսի 24-ի թիվ 1768/95 ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (ԵՀ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով «Համայնքի բուսատեսակների նկատմամբ իրավունքների մասին» Խորհրդի 1994 թվականի հուլիսի 27-ի թիվ 2100/94 կանոնակարգը (ԵՀ) (Հիմնական կանոնակարգը)¹, եւ, մասնավորապես, դրա 14(3) հոդվածը,

քանի որ հիմնական կանոնակարգի 14-րդ հոդվածով նախատեսված է շեղում Համայնքում բուսատեսակների նկատմամբ իրավունքից՝ գյուղատնտեսական ապրանքների պաշտպանության նպատակներով (գյուղատնտեսական բացառություն)

քանի որ այս շեղումը կիրառելու եւ սելեկցիոների ու ֆերմերի օրինական շահերը պաշտպանելու համար նախատեսված պայմանները սահմանվում են կիրարկվող կանոններով՝ հիմնական կանոնակարգի 14(3) հոդվածով սահմանված չափորոշիչների հիման վրա,

քանի որ սույն Կանոնակարգով սահմանվում են այդ պայմանները, մասնավորապես, ֆերմերների, մշակողների եւ սեփականատերերի՝ վերոնշյալ չափորոշիչներից բխող պարտավորությունները,

քանի որ այս պարտավորությունները հիմնականում վերաբերում են շեղումից օգտվելու համար ֆերմերների կողմից սեփականատերերին վճարվող համարժեք փոխհատուցմանը, տեղեկություններ տրամադրելուն, մշակման հանձնված բերքի նույնականությունը մշակումից հետո ստացված ապրանքի հետ ապահովելուն, ինչպես նաեւ շեղման մասին դրույթների հետ համապատասխանության դիտանցմանը,

քանի որ շեղումից օգտվելու համար սեփականատերերին փոխհատուցում վճարելու պարտավորություն չունեցող «մանր ֆերմերներ»-ի հասկացությունը սահմանվում է, մասնավորապես, որոշակի կերային մշակաբույսեր եւ կարտոֆիլներ աճեցնող ֆերմերների առումով,

քանի որ Հանձնաժողովը Համայնքի ամբողջ տարածքում կիրականացնի, մի կողմից, հիմնական կանոնակարգով սահմանված՝ «մանր ֆերմերներ» հասկացության եւ, մյուս կողմից, սույն Կանոնակարգով սահմանված՝ գործածությունից հանված տարածքների նշանակության եւ, կարտոֆիլների դեպքում, տարածքի առավելագույն մակերեսի վերաբերյալ հասկացությունների՝ սույն Կանոնակարգի 5 (3) հոդվածով սահմանված՝ փոխհատուցման դերի վրա ունեցած հավանական ազդեցության մանրակրկիտ դիտանցում եւ, հարկ եղած դեպքում, կներկայացնի համապատասխան առաջարկներ կամ կձեռնարկի

¹ ՊՏ L 227, 01. 09. 1994թ., էջ 1:

համապատասխան քայլեր՝ նպատակ ունենալով սահմանելու արտոնագրված բազմացման նյութի օգտագործման եւ բերքից ստացված ապրանքի օգտագործման հարաբերակցության միասնական գործակից Համայնքի ամբողջ տարածքում՝ համաձայն հիմնական կանոնակարգի 14-րդ հոդվածով նախատեսված շեղման,

քանի որ, այնուամենայնիվ, մինչ այժմ հնարավոր չի եղել գնահատել անդամ պետությունների գործող օրենսդրությունների համաձայն նախատեսված համեմատելի շեղումներից ստացված օգուտի չափը՝ անդամ պետությունների նշված օրենսդրություններով պաշտպանվող բուսատեսակների բազմացման նյութի արտոնագրված արտադրության համար ներկայումս գանձվող գումարների առումով,

քանի որ, ըստ այդմ, Հանձնաժողովը ներկայումս չի կարող պատշաճորեն եւ Համայնքի օրենսդիր մարմինն՝ հիմնական կանոնակարգի 14(3) հոդվածի համաձայն վերապահված գործողությունների ազատության շրջանակում սահմանել համարժեք փոխհատուցման չափը, որը պետք է զգալիորեն ավելի փոքր լինի, քան բազմացման նյութի-ի արտոնագրված արտադրության համար գանձվող գումարը,

քանի որ, այնուամենայնիվ, նախնական չափը, ինչպես նաեւ հետագա համապատասխանեցումների համակարգը պետք է սահմանվեն հնարավորինս շուտ եւ ոչ ուշ, քան մինչեւ 1997 թվականի հուլիսի 1-ը,

քանի որ, ավելին, սույն Կանոնակարգն ուղղված է սահմանելու, մի կողմից, Համայնքում բուսատեսակների նկատմամբ իրավունքի եւ հիմնական կանոնակարգի 14-րդ հոդվածի դրույթներից բխող իրավունքների միջեւ, եւ, մյուս կողմից, ֆերմերին տրամադրված թույլտվության եւ նրա տնտեսության միջեւ կապը,

քանի որ, ի վերջո, տվյալ դրույթներից բխող պարտավորությունները չկատարելու հետեւանքները պետք է պարզաբանվեն,

քանի որ Վարչական խորհուրդը խորհրդատվություն է տրամադրել,

քանի որ սույն Կանոնակարգով նախատեսված դրույթները համապատասխանում են Բուսատեսակների նկատմամբ իրավունքների հարցերով մշտական հանձնաժողովի եզրակացությանը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1

Գործողության շրջանակը

1. Սույն Կանոնակարգով սահմանվում են հիմնական կանոնակարգի 14 (1) հոդվածով սահմանված շեղումը կիրառելու համար նախատեսված պայմանները կիրարկող կանոնները:

2. Պայմանները, հիմնական կանոնակարգի 13(1) հոդվածի իմաստով, տարածվում են սեփականատիրոջ իրավունքների ու դրանց իրացման եւ պարտավորությունների ու դրանց կատարման վրա, ինչպես նաեւ թույլտվության ու դրա օգտագործման եւ ֆերմերի պարտավորությունների ու դրանց կատարման վրա այն չափով, որով նման իրավունքները, թույլտվությունը եւ պարտավորությունները բխում են հիմնական կանոնակարգի 14-րդ հոդվածի դրույթներից: Հիմնական կանոնակարգի 14(3) հոդվածի դրույթներից բխող իրավունքների, թույլտվության եւ պարտավորությունների առումով դրանք կիրառվում են նաեւ այլ անձանց նկատմամբ:

3. Եթե սույն Կանոնակարգով այլ բան նախատեսված չէ, ապա իրավունքներն իրացնելու, թույլտվություններն օգտագործելու կամ պարտավորությունները կատարելու հետ կապված մանրամասները կարգավորվում են այն անդամ պետության օրենքով, այդ թվում՝ դրա միջազգային մասնավոր իրավունքով, որտեղ գտնվում է ֆերմերի այն տնտեսությունը, որի նկատմամբ կիրառվում է շեղումը:

Հոդված 2

Շահերի պաշտպանությունը

1. 1-ին հոդվածում նշված պայմաններն իրականացվում են ինչպես սելեկցիոներին ներկայացնող սեփականատիրոջ, այնպես էլ ֆերմերի կողմից այնպես, որ պաշտպանվեն յուրաքանչյուրի օրինական շահերը:

2. Համարվում է, որ օրինական շահերը չեն պաշտպանվում, եթե այս շահերից մեկը կամ մի քանիսը ոտնահարվել են՝ առանց հաշվի առնելու դրանց բոլորի միջեւ ողջամիտ հավասարակշռություն պահպանելու անհրաժեշտությունը կամ համապատասխան պայմանով սահմանված նպատակի եւ դրա իրականացումից ստացված իրական արդյունքի միջեւ համաչափություն ապահովելու անհրաժեշտությունը:

ԳԼՈՒԽ 2

ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԸ ԵՎ ՖԵՐՄԵՐԸ

Հոդված 3

Սեփականատերը

1. Սեփականատիրոջ՝ սույն Կանոնակարգով սահմանված եւ հիմնական կանոնակարգի 14–րդ հոդվածի դրույթներից բխող իրավունքները եւ պարտավորությունները, բացառությամբ 5–րդ հոդվածում նշված՝ արդեն սահմանված չափով վճարվող համարժեք փոխհատուցումը ստանալու իրավունքի, չեն կարող փոխանցվել այլ անձանց: Այնուամենայնիվ, դրանք ներառվում են այն իրավունքների եւ պարտավորությունների մեջ, որոնք առնչվում են Համայնքում բուսատեսակի նկատմամբ իրավունքը փոխանցելուն՝ հիմնական կանոնակարգի 23–րդ հոդվածի դրույթներին համապատասխան:

2.1–ին պարբերության մեջ նշված իրավունքները կարող են վկայակոչվել անհատ սեփականատերերի,ինչպես նաեւ մի քանի սեփականատերերի կողմից համատեղ հիմունքներով կամ սեփականատերերի՝ Համայնքի, ազգային, տարածաշրջանային կամ տեղական մակարդակով Համայնքում հիմնադրված կազմակերպության կողմից: Սեփականատերերի կազմակերպությունը կարող է գործել միայն իր անդամների անունից կամ այն անձանց անունից, ովքեր այդ կազմակերպությանն իրենց անունից գործելու համապատասխան գրավոր մանդատ են տվել: Այն գործում է կամ իր ներկայացուցիչներից մեկի կամ մի քանիսի միջոցով, կամ իր կողմից հավատարմագրված աուդիտորների կողմից՝ նրանց համապատասխան մանդատի սահմաններում:

3. Սեփականատիրոջ կամ սեփականատերերի կազմակերպության ներկայացուցիչը, ինչպես նաեւ հավատարմագրված աուդիտորը.

- ա) մշտապես բնակվում է կամ ունի իր գրասենյակը կամ տնտեսական գործունեության իրականացման վայրը Համայնքի տարածքում է, եւ
- բ) գրավոր լիազորվում է սեփականատիրոջ կամ կազմակերպության կողմից, եւ
- գ) ներկայացնում է (ա) եւ (բ) կետերով սահմանված պայմանների ապացույցներ՝ հղում կատարելով սեփականատերերի կողմից հրապարակված կամ նրանց կողմից ֆերմերների կազմակերպություններին փոխանցված համապատասխան տեղեկություններին կամ այլ կերպ, եւ, պահանջի դեպքում, ներկայացնի (բ) կետում նշված գրավոր թույլտվության պատճենը բոլոր այն ֆերմերներին, ում դեմ վկայակոչում է իրավունքները:

Հոդված 4

Ֆերմերը

1. Ֆերմերի՝ սույն Կանոնակարգով կամ սույն Կանոնակարգի համաձայն ընդունված դրույթներով սահմանված եւ հիմնական կանոնակարգի 14-րդ հոդվածի դրույթներից բխող լիազորությունը եւ պարտավորությունները չեն կարող փոխանցվել այլ անձանց: Այնուամենայնիվ, դրանք ներառվում են այն իրավունքների եւ պարտավորությունների մեջ, որոնք առնչվում են ֆերմերի տնտեսությունը փոխանցելուն, եթե տնտեսությունը փոխանցելու մասին ակտով այլ բան նախատեսված չէ 5-րդ հոդվածում նշված համարժեք փոխհատուցումը վճարելու պարտավորության առնչությամբ: Լիազորության եւ պարտավորությունների փոխանցումն ուժի մեջ է մտնում միեւնույն ժամանակ, երբ ուժի մեջ է մտնում տնտեսության փոխանցումը:

2. Հիմնական կանոնակարգի 14(1) հոդվածի իմաստով՝ «սեփական տնտեսություն» է համարվում ցանկացած տնտեսություն կամ դրա ցանկացած մաս, որը ֆերմերը փաստացի շահագործում է բուսատեսակներ աճեցնելու համար՝ կամ որպես իր սեփականություն, կամ որպես իր պատասխանատվությամբ եւ իր հաշվին տնօրինվող տնտեսություն, մասնավորապես՝ վարձակալության հիմունքներով շահագործվող հողատարածքների դեպքում: Առաջին պարբերության իմաստով՝ այլ անձանց կողմից շահագործման հանձնելու նպատակով տնտեսության կամ դրա մի մասի օտարումը համարվում է փոխանցում:

3. Ֆերմեր է համարվում այն անձը (անձինք), ում տվյալ տնտեսությունը պատկանում է որպես սեփականություն այն պահին, երբ պահանջվում է կատարել որեւէ

պարտավորություն, եթե նա չի ներկայացնում ապացույց, որ ֆերմերը, ով պետք է կատարի պարտավորությունը, այլ անձ է՝ 1-ին եւ 2-րդ պարբերությունների դրույթներին համապատասխան:

ԳԼՈՒԽ 3

Փոխհատուցումը

Հոդված 5

Փոխհատուցման չափը

1. Սեփականատիրոջը՝ հիմնական կանոնակարգի 14(3) հոդվածի չորրորդ պարբերությի համաձայն վճարվող համարժեք փոխհատուցման չափը կարող է լինել տվյալ սեփականատիրոջ եւ ֆերմերի միջեւ կնքվող պայմանագրի առարկա:

2. Եթե նման պայմանագիր չի կնքվել կամ չի կիրառվում, ապա փոխհատուցման չափը զգալիորեն ավելի փոքր է, քան պաշտոնական հավաստագրման համար որակավորված՝ միեւնույն տարածքում միեւնույն բուսատեսակի ամենացածր կատեգորիայի բազմացման նյութի արտոնագրված արտադրության համար գանձվող գումարը:

Եթե այն տարածքում, որտեղ տեղակայված է ֆերմերի տնտեսությունը, չի իրականացվել տվյալ բուսատեսակի բազմացման նյութի արտոնագրված արտադրություն, եւ եթե Համայնքի ամբողջ տարածքում նշված գումարի չափը միասնական չէ, ապա փոխհատուցման չափը զգալիորեն ավելի փոքր է, քան այն գումարը, որը, վերոնշյալ նպատակով, սովորաբար ներառված է տվյալ տարածքում տվյալ բուսատեսակի ամենացածր կատեգորիայի՝ պաշտոնական հավաստագրման համար որակավորված բազմացման նյութի վաճառքի գնի մեջ՝ պայմանով, որ այն չի գերազանցում տվյալ բազմացման նյութի արտադրության վայրում գանձվող վերոնշյալ գումարի չափը:

3. Ինչպես սահմանված է վերոնշյալ 2-րդ պարբերությամբ՝ փոխհատուցման չափը համարվում է զգալիորեն փոքր հիմնական կանոնակարգի 14(3) հոդվածի չորրորդ պարբերությի իմաստով, եթե այն չի գերազանցում արտոնագրված բազմացման նյութին օգտագործելու եւ Համայնքում բուսատեսակների նկատմամբ իրավունքներով կարգավորվող համապատասխան բուսատեսակների բերքը տնկելու միջեւ հարաբերակցության ողջամիտ գործակիցը՝ որպես շեղումից օգտվելու չափը որոշող

տնտեսական գործոն սահմանելուկամ այն կայունացնելու համար անհրաժեշտ գումարի չափը: Նման գործակիցը համարվում է ողջամտության սահմաններում հավասարակշռված, եթե այն ապահովում է, որ սեփականատերը, ընդհանուր առմամբ, ստանա օրինական փոխհատուցում իր բուսատեսակի ամբողջական օգտագործման համար:

▼M1

4. Եթե 2-րդ պարբերության դեպքում փոխհատուցման չափը սեփականատերերի եւ ֆերմերների՝ համայնքային, ազգային կամ տարածաշրջանային մակարդակով Համայնքում հիմնադրված կազմակերպությունների միջեւ կնքվող պայմանագրերի առարկա է՝ անկախ մշակողների կազմակերպությունների մասնակցությունից, ապա փոխհատուցման համաձայնեցված չափերն օգտագործվում են որպես ուղեցույց՝ որոշելու համար տվյալ տարածքում եւ տվյալ մշակաբույսի համար վճարվող փոխհատուցման չափը, եթե այս չափերը եւ դրանց պայմանները գրավոր ծանուցվել են Հանձնաժողովին համապատասխան կազմակերպությունների իրավասու ներկայացուցիչների կողմից, եւ եթե դրա հիման վրա համաձայնեցված չափերը եւ դրանց պայմանները հրապարակվել են Համայնքում բուսատեսակների հարցերով գրասենյակի Պաշտոնական տեղեկագրում:

5. Եթե 2-րդ պարբերության դեպքում պայմանագիր չի կիրառվում, ինչպես նշված է 4-րդ պարբերությունում, ապա վճարվող փոխհատուցումը կազմում է բազմացման նյութերի արտոնագրված արտադրության համար գանձվող՝ 2-րդ պարբերությամբ սահմանված գումարների 50%-ը:

Այնուամենայնիվ, եթե անդամ պետությունը նախքան 1999 թվականի հունվարի 1-ը ծանուցել է Հանձնաժողովին ազգային կամ տարածաշրջանային մակարդակով հիմնադրված համապատասխան կազմակերպությունների միջեւ անխուսափելի պայմանագիր կնքելու մասին, ինչպես նշված է 4-րդ պարբերությունում, ապա տվյալ տարածքում եւ տվյալ մշակաբույսի համար վճարվող փոխհատուցումը կազմում է 40 տոկոս՝ վերոնշյալ 50-ի փոխարեն, սակայն միայն այն գյուղատնտեսական բացառության առումով, որն ընդունվել է նախքան նման պայմանագրի իրականացումը եւ ոչ ուշ, քան մինչեւ 1999 թվականի ապրիլի 1-ը:

6. Եթե 5-րդ պարբերության դեպքում ֆերմերը համապատասխան ժամանակաշրջանում օգտվել է գյուղատնտեսական բացառությունից այնպիսի գործակցով, որը կազմում է իր արտադրանքի համար օգտագործվող համապատասխան բուսատեսակի ամբողջ նյութի 55

տոկոսից ավելին, ապա տվյալ տարածքում եւ տվյալ մշակաբույսի համար վճարվող փոխհատուցման չափը համարժեք է այն գումարին, որը կվճարվեր նման բուսատեսակի առումով, եթե այն պաշտպանված լիներ համապատասխան անդամ պետության տարածքում այդ անդամ պետության՝ բուսատեսակների նկատմամբ իրավունքների ազգային համակարգով, եթե առկա է ազգային համակարգ, որը սահմանել է նման չափ, եւ պայմանով, որ այդ չափը կազմի բազմացման նյութերի արտոնագրված արտադրության համար գանձվող՝ 2-րդ պարբերությամբ սահմանված գումարների 50 տոկոսից ավելին: Եթե ազգային համակարգում առկա չէ նման չափ, ապա կիրառվում են 5-րդ պարբերության դրույթները՝ անկախ օգտագործման գործակից:

7. Ոչ ուշ, քան մինչեւ 2003 թվականի հունվարի 1-ը, վերանայվում են 5-րդ պարբերության առաջին ենթապարբերության եւ 6-րդ պարբերության դրույթները՝ հաշվի առնելով սույն Կանոնակարգի շրջանակներում ձեռք բերված փորձը եւ 3-րդ պարբերությունում նշված գործակցի զարգացումները՝ մինչեւ 2003 թվականի հուլիսի 1-ը դրանց հավանական հարմարեցման նպատակով, եթե այդ հարմարեցումը կարող է անհրաժեշտ լինել սահմանելու կամ կայունացնելու համար ողջամտորեն հավասարակշռված՝ վերոնշյալ պարբերությամբ սահմանված գործակիցը Համայնքի ամբողջ տարածքում կամ դրա մի մասում:

▼B

Հոդված 6

Վճարման անհատական պարտավորությունը

1. Չհակասելով 2-րդ պարբերության դրույթներին՝ Ֆերմերի՝ համարժեք փոխհատուցումը վճարելու անհատական պարտավորությունն առաջանում է այն ժամանակ, երբ նա դաշտում փաստացի օգտագործում է բերքից ստացված ապրանքը բազմացման նպատակներով:

Սեփականատերը կարող է որոշել վճարման ամսաթիվը եւ եղանակը: Այնուամենայնիվ, նա չի սահմանում վճարման այնպիսի ամսաթիվ, որը նախորդում է պարտավորությունն առաջանալու ամսաթվին:

2. Համայնքում բուսատեսակի նկատմամբ՝ հիմնական կանոնակարգի 116-րդ հոդվածի համաձայն տրամադրված իրավունքի դեպքում, հիմնական կանոնակարգի 116(4) հոդվածի երկրորդ պարբերության դրույթները վկայակոչելու իրավունք ունեցող ֆերմերի անհատական

պարտավորությունն առաջանում է այն ժամանակ, երբ նա 2001 թվականի հունիսի 30-ից հետո փաստացի օգտագործում է դաշտում՝ բերքից ստացված ապրանքը բազմացնելու նպատակներով:

Հոդված 7

Մանր ֆերմերները

1. Այն տարածքը, որտեղ աճեցվում են բույսեր՝ հիմնական կանոնակարգի 14(3) հոդվածի երրորդ պարբերության իմաստով, կանոնավոր մշակման եւ բերքահավաքի համար ծառայած ցանքատարածք է: Մասնավորապես, անտառային հողերը, հինգ տարուց ավելի գործող մշտական արոտավայրերը, մշտադալար բուսականությամբ հողերը եւ համակցված դեպքերը, ինչպես սահմանված է Բուսատեսակների նկատմամբ իրավունքների հարցերով մշտական կոմիտեի կողմից, չեն համարվում բույսեր աճեցնելու տարածքներ:

2. Ֆերմերի տնտեսության այն հողատարածքները, որտեղ բույսեր են աճեցվել, սակայն որոնք ժամանակավորապես կամ մշտական հիմունքներով դուրս են բերվել գործածությունից շուկայավարման տարում, որը համարվում է հաջորդ օրացուցային տարվա («շուկայական տարի») հուլիսի 1-ից հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածը, եւ երբ լրանում է փոխհատուցումը վճարելու ժամկետը, համարվում են տարածքներ, որտեղ շարունակում են աճեցվել բույսեր, եթե Համայնքը կամ տվյալ անդամ պետությունը գործածությունից դուրս բերված այդ տարածքների համար շնորհում է սուբսիդիաներ կամ փոխհատուցման վճարներ:

3. Չհակասելով հիմնական կանոնակարգի 14(3) հոդվածի երրորդ պարբերության առաջին ենթապարբերության սահմանված դրույթներին՝ այլ մշակաբույսերի դեպքում (հիմնական կանոնակարգի 14(3) հոդվածի երրորդ պարբերության երկրորդ ենթապարբերությամբ), մանր ֆերմերներ են համարվում այն ֆերմերները, ովքեր.

ա) նշված վերջին դրույթով կարգավորվող կերային մշակաբույսերի դեպքում. անկախ այն տարածքից, որտեղ աճեցնում են այդ կերային մշակաբույսերից տարբեր այլ մշակաբույսեր, չեն աճեցնում այդ կերային մշակաբույսերը հինգ տարուց ավելի ժամանակահատվածում մեկ բերքահավաքից 92 տոննա հացահատիկ ստանալու համար անհրաժեշտ հողատարածքից մեծ հողատարածքում,

բ) կարտոֆիլի դեպքում. անկախ այն տարածքից, որտեղ աճեցնում են կարտոֆիլից տարբեր այլ մշակաբույսեր, չեն աճեցնում կարտոֆիլ մեկ բերքահավաքից 185 տոննա հացահատիկ ստանալու համար անհրաժեշտ հողատարածքից մեծ հողատարածքում:

4.1-ին, 2-րդ եւ 3-րդ պարբերություններում նշված հողատարածքները յուրաքանչյուր անդամ պետության համար հաշվարկվում են՝

– այն մշակաբույսերի դեպքում, որոնց վրա տարածվում է Խորհրդի թիվ 1765/92 կանոնակարգը (ԵՏՀ)² եւ վերջինիս դրույթներով կարգավորվող կերային մշակաբույսերից տարբեր այլ մշակաբույսերի դեպքում՝ այդ կանոնակարգի դրույթներին, մասնավորապես, դրա 3-րդ եւ 4-րդ դրույթներին կամ այդ կանոնակարգի համաձայն ընդունված դրույթներին համապատասխան, եւ

– կարտոֆիլի դեպքում, տվյալ անդամ պետությունում սահմանված՝ մեկ հեկտարից ստացվող բերքի միջինի հիման վրա՝ «Հացահատիկից տարբեր այլ մշակաբույսերի վերաբերյալ անդամ պետությունների կողմից տրամադրվող վիճակագրական տեղեկությունների մասին»³ Խորհրդի թիվ 959/93 կանոնակարգի համաձայն տրամադրված վիճակագրական տեղեկություններին համապատասխան:

5. Այն ֆերմերը, ով, համաձայն իր սեփական պնդման, «մանր ֆերմեր» է, վեճի դեպքում ապացույց է ներկայացնում, որ բավարարում է այդ կատեգորիայի ֆերմերներին ներկայացված պահանջները: Այնուամենայնիվ, «մանր ֆերմերին» ներկայացված պահանջները, Խորհրդի թիվ 1765/92 կանոնակարգի (ԵՏՀ) 8(1) եւ (2) հոդվածի իմաստով, կիրառելի չեն այդ նպատակով, եթե սեփականատերը հակառակին չի համաձայնել:

ԳԼՈՒԽ 4

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հոդված 8

Ֆերմերի կողմից տրամադրված տեղեկությունները

² ՊՏ L 181, 01. 07. 1992թ., էջ 12:

³ ՊՏ L 98, 24. 04. 1993թ., էջ 1:

1. Ֆերմերի կողմից հիմնական կանոնակարգի 14(3) հոդվածի վեցերորդ պարբերության համաձայն՝ սեփականատիրոջը տրամադրվող համապատասխան տեղեկությունների մանրամասները կարող են լինել տվյալ սեփականատիրոջ եւ տվյալ ֆերմերի միջեւ կնքվող պայմանագրի առարկան:

2. Եթե նման պայմանագիր չի կնքվել կամ չի կիրառվում, ապա ֆերմերը, չհակասելով տեղեկությունների նկատմամբ Համայնքի այլ օրենսդրությամբ կամ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված պահանջներին եւ սեփականատիրոջ պահանջով, համապատասխան տեղեկությունների մասին հաշվետվություն է ներկայացնում սեփականատիրոջը: Հաշվետվության մեջ ներառվում է հետեւյալը.

ա) ֆերմերի անունը, մշտական բնակության վայրը եւ տնտեսության հասցեն,

բ) արդյոք ֆերմերն օգտագործել է սեփականատիրոջը պատկանող մշակաբույսերից մեկից կամ մի քանիսից ստացված բերքը՝ նրա տնտեսության դաշտում կամ դաշտերում տնկելու նպատակով,

գ) եթե ֆերմերն օգտագործել է բերքը նման եղանակով, ապա տվյալ բուսատեսակից կամ բուսատեսակներից ստացված բերքի այն քանակը, որը ֆերմերն օգտագործել է հիմնական կանոնակարգի 14(1) հոդվածին համապատասխան,

դ) համաձայն նույն պայմանի՝ այն անձի կամ անձանց անուններն ու հասցեն, ովքեր համապատասխան բերքը որպես տնկանյութ մշակելու ծառայություն են մատուցել ֆերմերին,

ե) եթե (բ), (գ) եւ (դ) կետերի համաձայն ձեռք բերված տեղեկությունները չեն կարող հաստատվել 14-րդ հոդվածի դրույթներին համապատասխան, ապա տվյալ բուսատեսակների արտոնագրված բազմացման նյութի այն քանակությունը, որն օգտագործել է ֆերմերը, ինչպես նաեւ դրանց մատակարարի կամ մատակարարների անունները, եւ

զ) եթե ֆերմերը վկայակոչում է հիմնական կանոնակարգի 116(4) հոդվածի երկրորդ պարբերության դրույթները, ապա այն փաստը՝ արդյոք ֆերմերն արդեն օգտագործել է տվյալ բուսատեսակը հիմնական կանոնակարգի 14(1) հոդվածում նշված նպատակով՝ առանց փոխհատուցում վճարելու եւ, եթե օգտագործել է, ապա երբեմնից:

3. 2 (բ), (գ), (դ) եւ (ե) պարբերությամբ նախատեսված տեղեկությունները վերաբերում են ընթացիկ շուկայավարման տարուն, ինչպես նաեւ դրան նախորդող երեք շուկայավարման

տարիներից մեկին կամ մի քանիսին, որոնց համար ֆերմերը նախկինում չի ներկայացրել համապատասխան տեղեկություններ՝ սեփականատիրոջ կողմից ներկայացված պահանջի հիման վրա՝ 4-րդ կամ 5-րդ պարբերությունների դրույթներին համապատասխան:

Այնուամենայնիվ, առաջին շուկայավարման տարին, որին վերաբերում են տեղեկությունները, համարվում է այն տարին, որի ընթացքում ներկայացվել է առաջին այդպիսի պահանջը տվյալ բուսատեսակի կամ բուսատեսակների եւ ֆերմերի առումով, կամ այն տարին, որի ընթացքում ֆերմերը ձեռք է բերել տվյալ բուսատեսակի կամ բուսատեսակների բազմացման նյութը, եթե դրան զուգահեռ ներկայացվել են տեղեկություններ առնվազն Համայնքում բուսատեսակի նկատմամբ իրավունք շնորհելու մասին դիմում ներկայացնելու կամ այդպիսի իրավունք շնորհելու վերաբերյալ, ինչպես նաեւ տեղեկություններ այդ բազմացման նյութն օգտագործելուն առնչվող հնարավոր պայմանների մասին:

Հիմնական կանոնակարգի 116-րդ հոդվածի դրույթներով կարգավորվող բուսատեսակների դեպքում, ինչպես նաեւ հիմնական կանոնակարգի 116(4) հոդվածի երկրորդ պարբերության դրույթները վկայակոչելու իրավունք ունեցող ֆերմերների առումով, առաջին շուկայավարման տարի է համարվում 2001/02:

4. Սեփականատերն իր պահանջում նշում է իր անունը եւ հասցեն, այն բուսատեսակը կամ բուսատեսակները, որոնց վերաբերյալ ցանկանում է ստանալ տեղեկություններ, ինչպես նաեւ հղում կամ հղումներ Համայնքում բուսատեսակի կամ բուսատեսակների նկատմամբ համապատասխան իրավունքին կամ իրավունքներին: Եթե ֆերմերն այդպես է պահանջում, ապա սեփականատերը դիմումը գրավոր է ներկայացնում, ինչպես նաեւ սեփականատիրության մասին ապացույցներ է տրամադրում: Չհակասելով 5-րդ պարբերության դրույթներին՝ պահանջն անմիջականորեն ներկայացվում է տվյալ ֆերմերին:

5. Այն պահանջը, որն անմիջականորեն չի ներկայացվել տվյալ ֆերմերին, համարվում է 4-րդ պարբերության երրորդ նախադասության դրույթներին համապատասխան, եթե այն ուղարկվել է ֆերմերներին հետեւյալ մարմինների կամ անձանց միջոցով՝ ըստ նրանց հետ նախապես ձեռք բերված համաձայնության.

- ֆերմերների կազմակերպություններ կամ կոոպերատիվներ՝ բոլոր այն ֆերմերների առումով, ովքեր նման կազմակերպության կամ կոոպերատիվի անդամ են, կամ

- մշակողներ՝ բոլոր այն ֆերմերների առումով, ում իրենք մատուցել են համապատասխան բերքը որպես տնկանյութ մշակելու ծառայություններ ընթացիկ շուկայավարման տարում, ինչպես նաեւ դրան նախորդող երեք շուկայավարման տարիների ընթացքում՝ սկսած 3-րդ պարբերությամբ սահմանված շուկայավարման տարուց, կամ
- սեփականատիրոջը պատկանող բուսատեսակների արտոնագրված բազմացման նյութի մատակարարները՝ բոլոր այն ֆերմերների առումով, ում իրենք մատակարարել են նման բազմացման նյութ ընթացիկ շուկայավարման տարում, ինչպես նաեւ դրան նախորդող երեք շուկայավարման տարիների ընթացքում՝ սկսած 3-րդ պարբերությամբ սահմանված շուկայավարման տարուց:

6. 5-րդ պարբերության դրույթներին համապատասխան ներկայացված պահանջի դեպքում, անհրաժեշտ չէ նշել անհատ ֆերմերներին: Տվյալ ֆերմերը կարող է լիազորել կազմակերպություններին, կոոպերատիվներին, մշակողներին կամ մատակարարներին՝ փոխանցելու համար պահանջվող տեղեկությունները սեփականատիրոջը:

Հոդված 9

Մշակողի կողմից տրամադրվող տեղեկությունները

1. Մշակողի կողմից սեփականատիրոջը հիմնական կանոնակարգի 14(3) հոդվածի վեցերորդ պարբերության համաձայն տրամադրվող տեղեկություններում ներառված տվյալները կարող են լինել սեփականատիրոջ եւ մշակողի միջեւ կնքվող պայմանագրի առարկան:
2. Եթե նման պայմանագիր չի կնքվել կամ այն կիրառելի չէ, ապա չհակասելով Համայնքի օրենսդրության կամ անդամ պետությունների օրենսդրության համաձայն ներկայացված պահանջներին՝ տեղեկությունների նկատմամբ, մշակողը պետք է սեփականատիրոջը ներկայացնի հաշվետվություն համապատասխան տեղեկությունների վերաբերյալ՝ վերջինիս պահանջով: Հաշվետվության մեջ ներառվում է հետեւյալը.
 - ա) մշակողի անունը, մշտական բնակության վայրը եւ բիզնեսի գրանցված անվանումն ու գրանցման հասցեն,
 - բ) արդյոք մշակողը մատուցել է սեփականատիրոջը պատկանող բուսատեսակներից մեկից կամ մի քանիսից ստացված բերքը որպես տնկանյութ մշակելու ծառայություններ, եթե

բուսատեսակը կամ բուսատեսակները հայտարարագրվել էին կամ այլ կերպ հայտնի էին մշակողին,

գ) եթե մշակողը մատուցել է նման ծառայություն, ապա տվյալ բուսատեսակից կամ բուսատեսակներից ստացված բերքի այն քանակությունը, որը մշակվել է մշակողի կողմից որպես տնկանյութ, ինչպես նաեւ այդ մշակման արդյունքում ստացված ամբողջ քանակությունը,

դ) (գ) կետում նշված մշակման ամսաթիվն ու վայրը, եւ

ե) այն անձի կամ անձանց անունը եւ հասցեն, ում մշակողը մատուցել է (գ) կետում նշված մշակման ծառայությունները, ինչպես նաեւ համապատասխան քանակությունները:

3. 2(բ), (գ), (դ) եւ (ե) պարբերության համաձայն տրամադրվող տեղեկությունները վերաբերում են ընթացիկ շուկայավարման տարվան, ինչպես նաեւ դրան նախորդող երեք շուկայավարման տարիներից մեկին կամ մի քանիսին, որոնց համար սեփականատերը դեռեւս պահանջ չի ներկայացրել՝ 4-րդ կամ 5-րդ պարբերությունների դրույթներին համապատասխան. այնուամենայնիվ, առաջին շուկայավարման տարին, որին վերաբերում են տեղեկությունները, համարվում է այն տարին, որի ընթացքում ներկայացվել է առաջին այդպիսի պահանջը՝ տվյալ բուսատեսակի կամ բուսատեսակների եւ մշակողի առումով:

4. 8(4) հոդվածը կիրառվում է համապատասխան փոփոխություններով:

5. Այն պահանջը, որն անմիջականորեն չի ներկայացվել տվյալ մշակողին, համարվում է 8(4) հոդվածի երրորդ նախադասության դրույթներին համապատասխան, եթե այն ուղարկվում է մշակողներին հետեւյալ մարմինների կամ անձանց միջոցով՝ ըստ նրանց հետ նախապես ձեռք բերված համաձայնության.

- Համայնքում մշակողների՝ համայնքային, ազգային, տարածաշրջանային կամ տեղական մակարդակով հիմնադրված կազմակերպություններ՝ բոլոր այն մշակողների առումով, ովքեր նման կազմակերպության անդամ են կամ ներկայացված են նման կազմակերպությունում,
- Ֆերմերներ՝ բոլոր այն մշակողների առումով, ովքեր այդ ֆերմերներին մատուցել են համապատասխան բերքը որպես տնկանյութ մշակելու ծառայություն ընթացիկ շուկայավարման տարում, ինչպես նաեւ դրան նախորդող երեք շուկայավարման տարիների ընթացքում՝ սկսած 3-րդ պարբերությունում նշված շուկայավարման տարուց:

6. 5-րդ պարբերության դրույթներին համապատասխան ներկայացված պահանջի դեպքում, անհրաժեշտ չէ նշել անհատ ֆերմերներին: Տվյալ մշակողները կարող են լիազորել կազմակերպություններին կամ ֆերմերներին՝ պահանջվող տեղեկությունները սեփականատիրոջն ուղարկելու համար:

Հոդված 10

Սեփականատիրոջ կողմից տրամադրվող տեղեկությունները

1. Ֆերմերին սեփականատիրոջ կողմից՝ հիմնական կանոնակարգի 14(3) հոդվածի չորրորդ պարբերությոի համաձայն տրամադրվող տեղեկություններում ներառված տվյալները կարող են լինել տվյալ ֆերմերի եւ տվյալ սեփականատիրոջ միջեւ կնքվող պայմանագրի առարկա:
 2. Եթե նման պայմանագիր չի կնքվել կամ այն կիրառելի չէ, ապա չհակասելով տեղեկությունների նկատմամբ՝ Համայնքի օրենսդրության կամ անդամ պետությունների օրենսդրության համաձայն ներկայացված պահանջներին՝ սեփականատերը պետք է ֆերմերին հաշվետվություն ներկայացնի համապատասխան տեղեկությունների վերաբերյալ՝ այն ֆերմերի պահանջով, ում նկատմամբ սեփականատերը 5-րդ հոդվածում նշված փոխհատուցումը վճարելու հայց/պահանջ է ներկայացրել: Հաշվետվության մեջ ներառվում է հետեւյալը.
- միեւնույն բուսատեսակի ամենացածր կատեգորիայի՝ պաշտոնական հավաստագրման համար որակավորված բազմացման նյութի արտոնագրված արտադրության համար գանձվող գումարն այն տարածքում, որտեղ տեղակայված է ֆերմերի տնտեսությունը, կամ
- եթե այն տարածքում, որտեղ տեղակայված է ֆերմերի տնտեսությունը, չի իրականացվել բազմացման նյութի արտոնագրված արտադրություն, եւ եթե Համայնքի ամբողջ տարածքում սահմանված չէ վերոնշյալ գումարի միասնական չափ, ապա այն գումարը, որը վերոնշյալ նպատակով սովորաբար ներառված է տվյալ տարածքում այդ բուսատեսակի ամենացածր կատեգորիայի՝ պաշտոնական հավաստագրման համար որակավորված բազմացման նյութի վաճառքի գնի մեջ, ինչպես նաեւ վերոնշյալ գումարը, որը գանձվում է բազմացման նյութի արտադրության վայրում:

Հոդված 11

Պետական մարմինների կողմից տրամադրվող տեղեկությունները

1. Սեփականատիրոջ կողմից պետական մարմինն ուղղված՝ կոնկրետ մշակաբույսերից ստացված տնկանյութը փաստացի օգտագործելու կամ նման օգտագործումից ստացված արդյունքների վերաբերյալ տեղեկություններ ստանալու մասին պահանջը գրավոր է ներկայացվում: Սեփականատերն իր պահանջում նշում է իր անունը եւ հասցեն, այն բուսատեսակը կամ բուսատեսակները, որոնց վերաբերյալ ցանկանում է ստանալ տեղեկություններ, ինչպես նաեւ այդ տեղեկությունների բնույթը: Նա նաեւ սեփականատիրության մասին ապացույցներ է տրամադրում:

2. Չհակասելով 12-րդ հոդվածի դրույթներին՝ պետական մարմինը կարող է չտրամադրել պահանջվող տեղեկությունները միայն այն դեպքում, եթե

- այն ներգրավված չէ գյուղատնտեսական արտադրության դիտանցման գործընթացում, կամ
- Համայնքի օրենսդրության կամ անդամ պետությունների՝ պաշտոնական մարմինների գործունեության առումով գործունեության ազատությունը կարգավորող օրենսդրության համաձայն՝ իրավասու չէ սեփականատերերին տրամադրելու նման տեղեկություններ, կամ
- համաձայն Համայնքի կամ այն անդամ պետությունների օրենսդրության, որով կարգավորվել է տեղեկությունների հավաքագրումը՝ իրավասու է չտրամադրելու նման տեղեկություններ, կամ
- պահանջվող տեղեկություններն այլեւս հասանելի չեն, կամ
- հնարավոր չէ ստանալ նման տեղեկություններ՝ իրականացնելով պետական մարմնի շարքային գործառույթներ, կամ
- նման տեղեկություններ կարելի է ստանալ՝ միայն վճարելով լրացուցիչ տուրքեր կամ վճարներ, կամ
- նման տեղեկությունները վերաբերում են այնպիսի նյութին, որը չի պատկանում սեփականատիրոջ բուսատեսակներին:

Տվյալ պետական մարմինները Հանձնաժողովին տեղեկացնում են վերոնշյալ երրորդ պարբերությամբ նշված իրավասությունները կիրարկելու եղանակի մասին:

3. Տեղեկություններ տրամադրելիս՝ պաշտոնական մարմինը խտրականություն չի ցուցաբերում սեփականատերերի միջև: Պետական մարմինը կարող է տրամադրել պահանջվող տեղեկությունները՝ սեփականատիրոջը տրամադրելով նրան պատկանող բուսատեսակների նյութին առնչվող տեղեկությունները լրացնող փաստաթղթերի պատճենները՝ պայմանով, որ ապահովվում է 12-րդ հոդվածում նշված դրույթներով պաշտպանվող անհատներին բացահայտելու ցանկացած հնարավորության բացառումը:

4. Եթե պետական մարմինը որոշում է կայացնում չտրամադրելու պահանջվող տեղեկությունները, ապա այն գրավոր տեղեկացնում է դրա մասին պահանջ ներկայացրած սեփականատիրոջը՝ նշելով նման որոշումն ընդունելու պատճառը:

Հոդված 12

Անձնական տվյալների պաշտպանությունը

1. Անձնական տվյալների առումով՝ 8-րդ, 9-րդ, 10-րդ կամ 11-րդ հոդվածի դրույթների համաձայն տեղեկություններ տրամադրող կամ ստացող ցանկացած անձ ենթարկվում է Համայնքի կամ անդամ պետությունների օրենսդրության՝ անձնական տվյալների մշակման եւ ազատ տեղաշարժի առումով անհատների պաշտպանության մասին դրույթներին:

2. 8-րդ, 9-րդ, 10-րդ կամ 11-րդ հոդվածի դրույթների համաձայն տեղեկություններ ստացող որեւէ անձ, առանց նախապես ստանալու տեղեկությունները տրամադրած անձի համաձայնությունը, չի փոխանցում այդ տեղեկություններն այլ անձի եւ չի օգտագործում դրանք Համայնքում բուսատեսակի նկատմամբ իրավունքները կիրարկելուց կամ հիմնական կանոնակարգի 14-րդ հոդվածով նախատեսված թույլտվությունն օգտագործելուց տարբեր այլ նպատակներով:

ԳԼՈՒԽ 5

ԱՅԼ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոդված 13

Ֆերմերի տնտեսությունից դուրս մշակելու դեպքում առաջացող պարտավորությունները

1. Չհակասելով անդամ պետությունների կողմից՝ հիմնական կանոնակարգի 14(3) հոդվածի երկրորդ պարբերության համաձայն սահմանված հնարավոր սահմանափակումներին՝ Համայնքում բուսատեսակների նկատմամբ իրավունքներով կարգավորվող բուսատեսակից ստացված բերքը, առանց սեփականատիրոջից նախապես ստացված համաձայնության, որպես տնկանյութ մշակվելու նպատակով չի կարող տեղափոխվել այն տնտեսությունից, որտեղ այդ բերքը ստացվել է, եթե ֆերմերը.

ա) չի ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ ապահովելու համար մշակման հանձնված ապրանքի նույնականությունը մշակման արդյունքում ստացվող ապրանքի հետ, եւ

բ) չի ապահովում, որ փաստացի մշակումն իրականացվի տնկանյութ պատրաստելու նպատակով բերքի մշակման ծառայություններ մատուցող մշակողի կողմից, ով.

– կամ գրանցված է եղել տվյալ անդամ պետության՝ հանրային շահերի հիման վրա ընդունված օրենսդրության համաձայն, կամ ֆերմերի նկատմամբ պարտավորություն է ստանձնել՝ այնքանով, որքանով դա վերաբերում է Համայնքում բուսատեսակների նկատմամբ իրավունքներով կարգավորվող բուսատեսակներին, պաշտոնական մարմնի կամ սեփականատերերի, ֆերմերների կամ մշակողների կազմակերպությունների միջոցով ծանուցելու իր գործունեության մասին այդ նպատակով անդամ պետությունում հիմնադրված, նշանակված կամ լիազորված իրավասու մարմնին՝ տվյալ իրավասու մարմնի կողմից սահմանված ցուցակում հաջորդաբար ընդգրկվելու նպատակով, եւ

– նաեւ համապատասխան միջոցները ձեռնարկելու պարտավորություն է ստանձնել ֆերմերի նկատմամբ՝ ապահովելու համար ֆերմերի կողմից մշակման հանձնված ապրանքի նույնականությունը մշակման արդյունքում ստացվող ապրանքի հետ:

2. Մշակողներին գրանցելու նպատակով, ինչպես նշված է 1-ին պարբերությունում, անդամ պետությունները կարող են սահմանել մշակողների կողմից բավարարվելիք որակավորման պահանջները:

3. 1-ին պարբերությունում նշված գրանցամատյանները եւ ցուցակները հրապարակվում են կամ հասանելի են դարձվում սեփականատերերի, ֆերմերների եւ մշակողների կազմակերպություններին համապատասխանաբար:

4. 1-ին պարբերությունում նշված ցուցակները սահմանվում են ոչ ուշ, քան մինչեւ 1997 թվականի հուլիսի 1-ը:

ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԴԻՏԱՆՑՈՒՄԸ

Հոդված 14

Ֆերմերների նկատմամբ իրականացվող դիտանցումը

1. Սեփականատիրոջ կողմից հիմնական կանոնակարգի 14-րդ հոդվածի դրույթների հետ համապատասխանության դիտանցում իրականացնելու նպատակով, ինչպես նշված է սույն Կանոնակարգում եւ այնքանով, որքանով դա վերաբերում է ֆերմերի կողմից պարտավորությունները կատարելուն, ֆերմերը, սեփականատիրոջ պահանջով.

ա) տրամադրում է տեղեկությունների մասին 8-րդ հոդվածի համաձայն ներկայացրած իր հաշվետվությունները հաստատող ապացույցներ՝ հրապարակելով համապատասխան այնպիսի փաստաթղթեր, ինչպիսիք հաշիվ-ապրանքագրերը, կիրառված պիտակներն են, կամ ներկայացնելով ցանկացած այլ համապատասխան գործիք, ինչպիսիք 13(1) հոդվածի համաձայն պահանջվող գործիքներն են, որոնք վերաբերում են.

- երրորդ անձի կողմից սեփականատիրոջը պատկանող բուսատեսակից ստացված բերքը որպես տնկանյութ մշակելու ծառայությունների մատուցմանը, կամ
- 8(2)(ե) հոդվածի դեպքում, սեփականատիրոջը պատկանող բուսատեսակի բազմացման նյութը մատակարարելուն,

կամ ցուցադրելով հողատարածքները կամ պահեստավորման համար նախատեսված շինությունները.

բ) հասանելի է դարձնում 4(3) կամ 7(5) հոդվածներով պահանջվող ապացույցները:

2. Չհակասելով Համայնքի մյուս օրենսդրություններին կամ անդամ պետությունների օրենսդրություններին՝ ֆերմերները պետք է պահպանեն 1-ին պարբերությունում նշված բոլոր նման փաստաթղթերը կամ գործիքներն առնվազն 8(3) հոդվածում նշված ժամանակահատվածում՝ պայմանով, որ օգտագործված պիտակների դեպքում, 8(3) հոդվածի երկրորդ ենթապարբերությունում նշված բազմացման նյութին կից տեղեկություններում ներառված է եղել այդ նյութին առնչվող պիտակը պահպանելու մասին նշումը:

Հոդված 15

Մշակողների նկատմամբ իրականացվող դիտանցումը

1. Սեփականատիրոջ կողմից հիմնական կանոնակարգի 14-րդ հոդվածի դրույթների հետ համապատասխանության դիտանցում իրականացնելու նպատակով, ինչպես նշված է սույն Կանոնակարգում եւ այնքանով, որքանով դա վերաբերում է մշակողի կողմից պարտավորությունները կատարելուն, մշակողը սեփականատիրոջ պահանջով տրամադրում է տեղեկությունների մասին 9-րդ հոդվածի համաձայն ներկայացրած իր հաշվետվությունները հաստատող ապացույցներ՝ հրապարակելով համապատասխան փաստաթղթեր, ինչպիսիք հաշիվ-ապրանքագրերն են, ինչպես նաեւ ներկայացնելով նյութի նույնականացման համար անհրաժեշտ գործիքները, կամ ցանկացած այլ համապատասխան գործիք, ինչպիսին պահանջվում է 13(1)(բ) հոդվածի երկրորդ պարբերության համաձայն, կամ այն մշակված նյութի նմուշները, որոնք առնչվում են սեփականատիրոջը պատկանող բուսատեսակից ստացված բերքը ֆերմերների համար որպես տնկանյութ մշակելու ծառայությունների մատուցմանը, կամ ցուցադրելով իր հողատարածքները կամ պահեստավորման համար նախատեսված շինությունները:

2. Չհակասելով Համայնքի մուս օրենսդրություններին կամ անդամ պետությունների օրենսդրություններին՝ մշակողները պետք է պահպանեն 1-ին պարբերությունում նշված բոլոր նման փաստաթղթերը կամ գործիքներն առնվազն 9(3) հոդվածում նշված ժամանակահատվածի ընթացքում:

Հոդված 16

Դիտանցումն իրականացնելու եղանակները

1. Դիտանցումն իրականացվում է սեփականատիրոջ կողմից: Վերջինս կարող է ձեռք բերել համապատասխան պայմանավորվածություններ՝ ապահովելու համար ֆերմերների, մշակողների, կոոպերատիվների կամ գյուղատնտեսական համայնքի այլ օղակների կողմից օժանդակության տրամադրումը:

2. Դիտանցման եղանակներին վերաբերող պայմանները, որոնք սահմանված են համայնքային, ազգային, տարածաշրջանային կամ տեղական մակարդակով Համայնքում հիմնադրված՝ սեփականատերերի, ֆերմերների կամ մշակողների կազմակերպությունների

միջեւ կնքված պայմանագրերով, կիրառվում են որպես ուղեցույց, եթե այս պայմանագրերը գրավոր ծանուցվել են Հանձնաժողովին համապատասխան կազմակերպությունների լիազոր ներկայացուցիչների կողմից եւ հրապարակվել են Համայնքում բուսատեսակների հարցերով գրասենյակի պաշտոնական տեղեկագրում:

ԳԼՈՒԽ 7

ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՏՈՒԿ ՀԱՅՑԵՐԸ

Հոդված 17

Խախտումները

Սեփականատերը կարող է վկայակոչել Համայնքում բուսատեսակների նկատմամբ իրավունքներով վերապահված իրավունքներն այն անձի նկատմամբ, ով խախտում է հիմնական կանոնակարգի 14-րդ հոդվածով նախատեսված շեղմանը կցված պայմաններից կամ սահմանափակումներից որեւէ մեկը, ինչպես նշված է սույն Կանոնակարգում:

Հոդված 18

Քաղաքացիական օրենքով ներկայացված հատուկ հայցերը

1. Սեփականատերը կարող է հայց ներկայացնել 17-րդ հոդվածում նշված անձի դեմ՝ պահանջելով, որ վերջինս կատարի հիմնական կանոնակարգի 14(3) հոդվածով սահմանված իր պարտավորությունները:
2. Եթե տվյալ անձը պարբերաբար եւ դիտավորյալ չի կատարել հիմնական կանոնակարգի 14(3) հոդվածի 4-րդ պարբերությամբ սահմանված՝ միեւնույն սեփականատիրոջը պատկանող բուսատեսակներից մեկին կամ մի քանիսին առնչվող իր պարտավորությունը, ապա ցանկացած հետագա վնասի համար սեփականատիրոջը փոխհատուցելու պարտավորությունը, համաձայն հիմնական կանոնակարգի 94(2) հոդվածի, հաշվարկվում է առնվազն միեւնույն տարածքում տվյալ մշակաբույսերի պաշտպանվող տեսակների բազմացման նյութի՝ համապատասխան քանակությամբ արտոնագրված արտադրության համար գանձվող գումարի միջինի քառապատիկի հիման վրա՝ որպես միանվագ վճարման

ենթակա գումար՝ առանց հակասելու ավելի մեծ չափի ցանկացած այլ վնաս փոխհատուցելուն:

ԳԼՈՒԽ 8

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 19

Ուժի մեջ մտնելը

Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում *Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում* հրապարակվելու օրը:

Սույն Կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է եւ անմիջականորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում: